

հերողամտութեան, անհաւասարութեան վրայ հաստատուած ու կոթնած կղերը չի կարող երբէք անպատիժ մնալ, ո՛րք թէ յաղթանակ տանել :

Յաղթանակը լոյսինն է, յաղթանակը ճշմարտութեանն է :

Գաթուիկ հողերորականութեան հասուցման ժամը հիշել է : Նա պարտաւորուած է համար ու հաշիւ տալու աշխարհ եկած Մեմբալային՝ ժողովրդի ինքնաճանաչութեանը-գիտութեան դատաստանին : Նա՝ կղերը պարտաւորուած է ընդունելու հասարակական գործունէութեան անարատ Տիրոջ խաբարանի հարուածները եւ իբրեւ « մանկուոյն մոլորեցողներ », իբրեւ հասարակական գործունէութեան ասպարէզը « աւազակաց այր » զարձնողներ քշուելու, վաճառուելու սուրբ տաճարներից եւ ան միայն Հասարակապետական Յրանախայում, այլ եւ, ոչ շատ հեռու ապագայում, նաեւ Հռոմում, Իտալիայում :

Այո՛, նաեւ Հռոմում — Իտալիայում, ուր այժմ պապը թէ՛ եւ Վատիկանում սղծուած, բայց ամեն ժամանակ երազում է, ամեն կերպ աշխատում է իր կորցրած աշխարհական անկո-

պար իշխանութիւնը ձեռք ձգել, ի հարկէ, վերածնած Իտալիայի կործանմամբ :

Եւ որովհետեւ պապական եկեղեցին ամենից ամբարտաւան ու եսականն է եղել, աշխարհական ձգտումներով ամենից անկուշտն է եղել, աւետարանական զաղափարներն ամենից քմահաճ մեկնողն ու վարդապետողն է եղել, քընհաղատութեան ողին ամենից խիստ հալածողն է եղել եւ իր ձգտումներէ ու քայլերի մէջ ամենից անձնապաշտ եւ կամապաշտն է եղել, ուստի եւ պիտի ամենից խիստ հատուցումն էլ ստանայ :

Այն ինչ միւս եկեղեցիները, յարմարուելով գիտութեան եւ քաղաքակրթութեան լուսարանող ճշմարտութիւնների հետ, հաշտ կացութեամբ շարունակում են եւ զուգէ դեռ երկար կը շարունակեն իրենց գոյութիւնը, պապականութիւնը պաշտօնապէս կը զատապարտուի մահւան Եւրոպայում :

Եւ այս մտնուան դասապարտութեան վճիռն էր, որ այդքէն արտասուեց Հասարակապետական Յրանախան իր պատգամաւորների ֆուկներով :

ԽԱՂՈՒՆԻ

Դեկտ. 1901 Պարիզ

Հ ա Յ ը գ ի գ

Ի՞նչ է, եա՛րաք, սիրողներիս ի՞նչ եղաւ որ սէր չկայ .
Սիրուող կոյսի՛ն ի՞նչ եղաւ որ կոյսերից ե՛լ խեղ չկայ .
Ո՛ւր ես, ո՛ւր ես, ո՛վ սուրբ քրքր, կենաց ցուրբ սեւացաւ .
Արիւն կաթեց վարդի սոսից, գեփիւրդ ե՛ր ուսացաւ .
Ա՛յս ի՞նչ բան է, գարունն եկել, բացուել են վարդ քե ծաղիկ ,
Ո՛չ բլբուլ կայ ա՛յ հազարան, ոչ խօսում է դիզմանիկ .
Աւելի շուր, անձեւի ցող, դրանց սեանես ի՞նչ եղաւ ,
Որ հանիքը ազնուութեան դեռ մի գոհար դուրս չեկաւ .
Ա՛յս ի՞նչ բան է, գինիս լին է, ոչ ոք գինու սէր չունի ,
Քաջ երածիսն անում չէ սազ, սազն երեւի ձեմ չունի :
Ասող չկայ, որ սիրողը պէճ էլ ունի սիրուելու .
Որ իշտանքն չի ճանաչուում, սիրողն ո՛ւմ է յիմեղու .
Մեզեղ ձգուած է գնդակը վեհանձնութեան, քաջութեան ,
Ո՛չ ոք չկայ գայ ասպարէզ, ձիաւորներն ի՞նչ եղան :

Լո՛ւի՛ր, Հա՛Յրգ, մարդ չի գիտում գայեցիկները Ասունծու ,
Էլ ումի՛նք ես հաջ օալիս քե վերջներս ի՞նչ է լինելու :

Դարեժ

Թարգմ. Պարսկերէնից
ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱՒՍՈՒՏԵԱՆ

(*) Այս տողն ակնարկով ինչ էլ չէ անհամարձակ ամբողջ կտրուած լայնալիւսներից մեկին :